ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյան

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ

քաղաքական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХОСРОВАДУХТ ГАРЕГИНОВНА АЗАТЯН

ОСОБЕННОСТИ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПАРЛАМЕНТАРИЗМА В ТРАНСФОРМАЦИОННЫХ ОБЩЕСТВАХ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.01 – «Теория политической науки»

АВТОРЕФЕРАТ

Ереван 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Փ. Ենգոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Մ. Քեռյան**

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մ. Խ. Դավթյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 9-ին, ժամը 15:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2022 թ. հուլիսի 27-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Վ. Ս. Պետրոսյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор политических наук, профессор **А. П. Енгоян**

Официальные оппоненты: доктор политических наук, профессор **Г. М. Керян**

кандидат политических наук, доцент **М. Х. Давтян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 9-ого сентября 2022 г. в 15:00 на заседании специализированного совета 056 «Политология и международные отношения» ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, РА.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.
Автореферат разослан 27-ого июля 2022 г.

Ученый секретарь специализированного совета 056,
кандидат исторических наук, доцент **В. С. Петросян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: «Պառլամենտարիզմ» և «խորհրդարան» երևույթները ժամանակակից քաղաքական գիտության այժմեական հիմնախնդիրների թվին են դասվում: Ներկայումս՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի պայմաններում, փաստ է, որ կառավարման ներկայացուցչական ձևն ամենատարածվածն է աշխարհում:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ կառավարումը կարող է արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ այն կրողների իշխանությունը սահմանափակված է և վերահսկելի: Ժողովրդավարական քաղաքական իշխանության կարևորագույն բնութագրիչներից մեկը քաղաքական ինստիտուտների գործառնումն է ներկայացուցչականության երաշխավորման պայմաններում: Պետական կառավարման համակարգի կայուն գործառնման և քաղաքական որոշումների կայացման լեգիտիմության ապահովման տեսանկյունից կենտրոնական դերակատարություն ունի խորհրդարանը: Այսօր դժվար թե գտնվի մի պետություն, որտեղ խորհրդարանի մասին առհասարակ խոսք չգնա:

Միջխորհրդարանական միության տվյալների շտեմարանում (IPU)[1] հաշվվում է այդպիսի 193 երկիր: Անկասկած, դրանց թվում ներառված են նաև ոչ ժողովրդավարական համակարգեր ունեցող պետություններ: Բացի դրանից՝ պառլամենտարիզմը գոյություն ունի ոչ միայն ազգային պետական քաղաքականության, այլև տարածաշրջանային և վերպետական մակարդակներում: Որպես դասական օրինակ կարելի է նշել Եվրոպական միության ազդեցիկ կառույցներից մեկը՝ Եվրոպական խորհրդարանը: Միջազգային քաղաքականության մեջ պառլամենտարիզմը դրսևորվում է նաև խորհրդարանական տարբեր ժողովների տեսքով:

Վերը նշված գործոններով պայմանավորված՝ խորհրդարանի և պառլամենտարիզմի նկատմամբ մասնագիտական, գիտագործնական հետաքրքրությունն ավելի ու ավելի է աճում՝ քաղաքական գիտության հրամայականներից մեկը դարձնելով այդ հիմնահարցերի խորը ուսումնասիրությունը: Ի տարբերություն խորհրդարանի, որի հետազոտումը գիտական շրջանակների կողմից վաղ պատմություն ունի և այն իր գոյության պահից սկսած մշտապես գտնվել է ուշադրության կենտրոնում, պառլամենտարիզմը համեմատաբար երիտասարդ հասկացություն է:

Չնայած դրան՝ արևմտյան զարգացած ժողովրդավարություններում արդեն պառլամենտարիզմի տեսության շուրջ ծավալված բուռն բանավեճերի

[1] Տե՛ս Parline database on national parliaments, http://archive.ipu.org/parline-e/parlinesearch.asp, հասանելի՝ 18.02.2018:

արդյունքում հետպառլամենտարիզմի և նեոպառլամենտարիզմի մասին տեսություններ են մշակվել:

Պառլամենտարիզմի նկատմամբ աճող հետաքրքրությունը կապված է նաև այն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում: Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց: Աշխարհակարգի փոփոխությունը հանգեցրեց ուժային վերադասավորումների և արմատական քաղաքական տեղաշարժերի: Նախկին սոցիալիստական ճամբարի տարածքում տոտալիտար քաղաքական համակարգերի փլուզումը, արագ զարգացող արդիականացման գործընթացները շոշափում էին հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, մասնավորապես քաղաքական բնագավառը: Նորանկախ երկրների քաղաքական էլիտաները ստիպված էին մտածել այնպիսի սահմանադրական մոդելի և կառավարման ձևի ընտրության մասին, որը հստակ կամրագրեր պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի, այդ թվում խորհրդարանի տեղը քաղաքական համակարգում: Անցումային փուլի պայմաններում խորհրդարանի դերը սոցիալ-քաղաքական վերափոխումներում էականորեն մեծանում է, քանի որ այդ ժամանակ ներկայացուցչական մարմինները վերածվում են տարբեր քաղաքական ուժերի միջև ինչպես բանավեճերի, այնպես էլ համագործակցության վայրերի: Դրանք ժամանակակից ժողովրդավարության գործառնության առաջնորդող, զարգացման հզոր ներուժ և փոփոխվող պայմաններին հարմարվելու մեծ կարողություն ունեցող կազմավորումներ են: Մյուս կողմից՝ փոխակերպվող երկրների պետական ինստիտուտների գործառնության անկայուն բնույթը, պայմանավորված նոր պայմաններում աշխատելու փորձի բացակայությամբ, խնդիրներ է առաջացնում խորհրդարանի և գործադիր իշխանության հարաբերակցության հարցում, մի շարք հակասություններ են ծագում պետական համակարգի գործառնության սահմանադրական սկզբունքների և գործնականում դրանց իրականացման միջև: Ուստի տրանսֆորմացիոն երկրներում պառլամենտարիզմի զարգացման ժամանակակից փորձի ուսումնասիրումը պարարտ հող է նախապատրաստում համեմատական վերլուծության համար, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում վեր հանել յուրաքանչյուր երկրում դրա հաջողության կամ էլ ձախողման պատճառները:

Ատենախոսության թեմայի այժմեականությունն ու հրատապությունը պայմանավորող հաջորդ կարևորագույն գործոնը փոխակերպվող երկրների թվին դասվող ՀՀ-ում պառլամենտարիզմի կայացման նախադրյալների և միտումների վերլուծությունն է: Ինչպես հետխորհրդային մյուս երկրներում, այնպես էլ նորանկախ ՀՀ-ում

քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացը սկիզբ դրեց ժողովրդավարության անցմանը, որն էլ հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխմանը: Ներկայումս ՀՀ քաղաքական համակարգի առջև լրջագույն մարտահրավերներ են ծառացած: Ժողովրդավարության ամրապնդման կարևորությունը քաղաքական խոսույթի կենտրոնում է նորանկախ ՀՀ պատմության գրեթե ողջ ընթացքում՝ կարևորվելով թե՛ իշխանության և թե՛ ընդդիմության կողմից: Բազմաթիվ կարգավորումներ են ընդունվել և փոփոխվել այս ընթացքում՝ ներառյալ 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, որոնք միտված էին առաջին հերթին մեծացնելու օրենսդիր մարմնի և կուսակցությունների դերը: Բացի դրանից՝ ՀՀ-ն այսօր, չնայած կիսանախագահական համակարգին վերադառնալու քննարկումներին, դեռ շարունակում է մնալ խորհրդարանական երկիր: Հայկական քաղաքագիտական խոսույթի առանցքային հիմնախնդիրներից մեկը մեր երկրում պառլամենտարիզմի հետագա զարգացմանն է վերաբերում: Սա, իր հերթին, հայրենական քաղաքագիտության հրամայականներից է դարձնում հիմնահարցի խորը հետազոտությունը, պառլամենտարիզմի միջազգային փորձի ըմբռնումը, ինչպես նաև դրա զարգացման միտումների վերհանումը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Այս առումով հետազոտման լայն դաշտ կա, քանի որ հայ իրականության մեջ դեռ նոր են սկսել թափ առնել պառլամենտարիզմի վերաբերյալ ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտն է պառլամենտարիզմի՝ որպես պետական իշխանության կազմակերպման և գործառնման համակարգի ուսումնասիրությունը, իսկ **առարկան** փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի կայացման առանձնահատկությունների բացահայտումն ու զարգացման միտումների վերհանումը:

Հետազոտության գիտական մշակվածության աստիճանը: Ատենախոսության թեմայի տարբեր կողմեր մշակվածության տարբեր աստիճաններ ունեն: Քաղաքական մտքի պատմության ողջ ընթացքում բազմաթիվ տեսաբաններ այս կամ այն չափով անդրադարձել են պառլամենտարիզմի հիմքում ընկած ժողովրդական ներկայացուցչության և ժողովրդի՝ իշխանության միակ աղբյուրը լինելու մասին գաղափարներին: Այդ հեղինակներն են՝ Պլատոնը[2], Արիստոտելը[3], Թ. Հոբսը[4], Ս. Միլլը[5], Մ.

[2] Տե՛ս **Платон,** Собрание сочинений, т. 4, М., 1994:

[3] Տե՛ս **Аристотель,** Сочинения, т. 4, М., 1983:

[4] Տե՛ս **Гоббс Т.,** Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского, https://www.civisbook.ru/files/File/Gobbs_Leviafan.pdf. հասանելի՝ 15.06.2020:

Վեբերը[6], Ռ. Դալը[7] և այլոք: Պառլամենտարիզմի տեսական հիմքերից մեկը համարվող իշխանությունների տարանջատման գաղափարին են նվիրված Ջ. Լոկի տրակտատները[8], Շ. Մոնտեսքյոյի[9], Ժ.-Ժ Ռուսոյի[10] աշխատանքները: Իշխանությունների տարանջատման գաղափարի զարգացման գործում անգնահատելի նշանակություն ունեն նաև ֆեդերալիստների աշխատությունները: Նշված հեղինակներից յուրաքանչյուրը պետական իշխանության համակարգում օրենսդիր իշխանության տեղի և դերի վերաբերյալ սեփական մոտեցումներն է ներկայացրել: Շ. Մոնտեսքյոն, Ջ. Լոկը և Ս. Միլլը, օրինակ, հենվել են պառլամենտարիզմի լիբերալ հայեցակարգի վրա՝ իշխանությունների տարանջատումը դիտարկելով որպես պետական կառուցվածքի հիմնարար սկզբունք:

Պառլամենտարիզմի տեսական հիմքերի վերլուծությունն իրականացնելիս օգտագործվել են Շ. Մարշալի «Պառլամենտարիզմի ներածություն»[11], Ու. Ֆոն Ալեմանի «Կուսակցական համակարգերը պառլամենտարիզմի պայմաններում. պառլամենտարիզմի ներածություն և քննադատություն»[12], Յ. Հարթմանի «Պլյուրալիզմը և պառլամենտարիզմը տեսության մեջ և գործնականում»[13] և այլ աշխատություններ:

Ժամանակակից պառլամենտարիզմի առանձնահատկությունների բացահայտումը հնարավոր է դարձել Կ. Բոսլի «Ժամանակակից պառլամենտարիզմը և դրա հիմքերը ներկայացուցչության պայմաններում»[14] աշխատությանը ծանոթանալու շնորհիվ:

Զարգացած պառլամենտարիզմի վկայություններից կարևորագույնը խորհրդարանի վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացումն է: Այս առումով հետազոտության համար տեսական հիմք է

---

[5] Տե՛ս **Милль Ст.,** Размышления о представительном правлении, Chalidze publications, 1988:

[6] Տե՛ս **Weber M.,** Politik als Beruf, file:///C:/Users/Hovo/Downloads/Weber%20Politik%20als%20Beruf.pdf. հասանելի՝ 15.06.2018:

[7] Տե՛ս **Даль Р.,** Демократия и ее критики, "Российская политическая энциклопедия" (РОССПЭН), М., 2003:

[8] Տե՛ս **Локк Дж.,** Сочинения в 3-х томах, М., 1988:

[9] Տե՛ս **Монтескье Ш.,** О духе законов, https://www.civisbook.ru/files/File/Monteskye_O%20dukhe.pdf. հասանելի՝ 12.02.2018:

[10] Տե՛ս **Руссо Ж.-Ж.,** Об общественном договоре, или принципы политического права, https://www.civisbook.ru/files/File/Russo_O_dogovore.pdf, հասանելի՝ 15.08.2020:

[11] Տե՛ս **Marschall St.,** Parlamentarismus: Eine Einfuhrung, Nomos Verlagsgesellschaft, Baden-Baden, 2016:

[12] Տե՛ս **Alemann von U.,** Parteiensysteme im Parlamentarismus. Eine Einfuhrung und Kritik von Parlamentarismus, Bertelsmann Universitatsverlag, 1973:

[13] Տե՛ս **Hartmann J.,** Pluralismus und Parlamentarismus in Theorie und Praxis, Westdeutscher Verlag, 1992:

[14] Տե՛ս **Bosl K.,** Der moderne Parlamentarismus und seine Grundlagen in der standischen Repräsentation, Berlin, 1975:

ծառայել Է. Բուշի «Խորհրդարանական վերահսկողություն»[15] աշխատությունը:

Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնահարցերն անհնար կլիներ հասկանալ առանց Ս. Հանթինգթոնի[16], Ֆ. Ֆուկույամայի[17], Է. Թոֆֆլերի[18]՝ ժողովրդավարության ապագային նվիրված աշխատությունների հետազոտության: Վերջիններս տարբեր տեսակետներ են արտահայտում նոր հազարամյակում Արևմուտքի երկրների քաղաքական գործընթացներում պառլամենտարիզմի դերի հետ կապված:

Առաջիններից մեկը, ով հստակորեն տարանջատել է «պառլամենտարիզմ» և «ժողովրդավարություն» հասկացությունները, գերմանացի փիլիսոփա Կ. Շմիտտն է: Նա, ընդգծելով պառլամենտարիզմի՝ որպես հոգևոր և քաղաքական ֆենոմենի բնութագրիչներն ու պատմական բնույթը, նշում էր, որ լիբերալ, անհատականության վրա հիմնված պառլամենտարիզմը նույնական չէ ժողովրդավարության հետ[19]:

Արևմտյան ժամանակակից քաղաքագետ, գերմանացի իրավաբան Փ. Բադուրան ևս իր «Պառլամենտարիզմ և կուսակցապետական ժողովրդավարություն» աշխատության մեջ մասնակցային ժողովրդավարության վերելքի պայմաններում կասկածի տակ է դնում պառլամենտարիզմի հիմքերը[20]:

Արևմտյան հեղինակների կողմից բազմիցս մեջբերված պառլամենտարիզմի հանրահայտ տեսաբան Վ. Բագեհոթի գաղափարները մեզ թույլ են տվել համակողմանի պատկերացում կազմել կուսակցական համակարգերի և պառլամենտարիզմի հարաբերակցության մասին: Աշխատանքում տեղ են գտել նաև Ռ. Ռեդսլոբի՝ խորհրդարանական կառավարության վերաբերյալ պատկերացումները[21]:

20-րդ դարի վերջին քառորդին մեկնարկած սոցիալ-քաղաքական փոխակերպման գործընթացներն ու երևույթները ինչպես գլոբալ, այնպես էլ

---

[15] Տե՛ս **Busch E.,** Parlamentarische Kontrolle, Heidelberg, 1991:

[16] Տե՛ս **Хантингтон С.,** Третья волна, Демократизация в конце XX века, М., 2003:

[17] Տե՛ս **Фукуяма Ф.,** Конец истории и последний человек, http://lib.ru/POLITOLOG/FUKUYAMA/konec_istorii.txt, հասանելի՝ 10.08.2019:

[18] Տե՛ս Представительная демократия и парламентские учреждения в современном мире: состояние и тенденции, http://duma.gov.ru/media/files/fFeAlYFCA4BcXWRAVDIn8AvWRfy6zDPk.pdf, հասանելի՝ 10.08.2019:

[19] Տե՛ս **Schmitt C.,** Die geistesgeschichtliche Lage des heutigen Parlamentarismus, Duncker und Humbolt, Berlin, https://www.duncker-humblot.de/_files_media/leseproben/9783428550302.pdf, հասանելի՝ 10.08.2019:

[20] Տե՛ս **Badura P.,** Parlamentarismus und parlamentarische Demokratie, https://epub.ub.uni-muenchen.de/9169/1/9169.pdf, հասանելի՝ 12.08.2019:

[21] Տե՛ս **Redslob R.,** Die parlamentarische Regierung in ihrer wahren und ihrer unechten Form. Eine vergleichende Studie über die Verfassungen von England, Belgien, Ungarn, Schweden und Frankreich, Tübingen, 1918:

ազգային մասշտաբի բազմաթիվ հարցեր առաջացրին, որոնց հետազոտությունը համակարգված ուսումնասիրությունների անհրաժեշտություն ծնեց: 1970-ական թթ. սկզբից համեմատական քաղաքագիտության զարգացմանը զուգընթաց՝ նոր՝ «անցումաբանություն» անվանումով ուղղություն էր ձևավորվել, որի ուշադրության կենտրոնում անցումային հասարակությունների ժողովրդավարացման հիմնախնդիրների ուսումնասիրումն էր: Վերլուծության էին ենթարկվում տոտալիտար և ավտորիտար հասարակությունների՝ ժողովրդավարության անցման սոցիալական և ինստիտուցիոնալ նախադրյալները: Այս հայեցակարգի հետագա զարգացման համար խթան հանդիսացավ Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի մի շարք ավտորիտար վարչակարգերի փլուզումը՝ Իսպանիա, Պորտուգալիա, Բրազիլիա, Արգենտինա, Չիլի և այլն, ինչպես նաև 1980-ականների վերջին կոմունիստական երկրներում տոտալիտար վարչակարգերի անկումը: Նշված շրջանին հաջորդեց անցումնաբանական հետազոտությունների նոր փուլ՝ կապված Եվրոպայի հետկոմունիստական և նախկին Խորհրդային Միության երկրներում քաղաքական-տրանսֆորմացիոն գործընթացների վերլուծության հետ:

Անցումային երկրներում պառլամենտարիզմի առանձնահատկությունների բացահայտման հրամայականը անհրաժեշտություն է առաջացնում ծանոթանալ անցումագետ հետազոտողների տեսություններին, ինչպիսին օրինակ Դ. Ռաստոուի[22] տեսությունն է:

Հետխորհրդային տարածության երկրների փոխակերպման հիմնախնդիրների ուսումնասիրումը գտնվում է ինչպես այդ տարածության երկրների, այնպես էլ արևմտյան հետազոտողների լայն շրջանակի ուշադրության կենտրոնում: Այդ հետազոտություններում առանձնահատուկ տեղ է հատկացվում խորհրդարանական համակարգերի և պառլամենտարիզմի կայացման և զարգացման հարցերին:

Փոխակերպվող երկրներում պառլամենտարիզմի կայացման հիմնախնդիրներն առանցքային տեղ են զբաղեցնում նաև զարգացած ժողովրդավարությունների հետազոտական կենտրոններում: Ֆրանկֆուրտի Վիադրինայի համալսարանում, օրինակ, Փոխակերպման հետազոտությունների ինստիտուտ է գործում: Այդ ինստիտուտի հրատարակությունների մի ամբողջ շարք նվիրված է հետխորհրդային ողջ տարածության փոխակերպման գործընթացների ուսումնասիրմանը[23]:

---

[22] Տե՛ս **Растоу Д.,** Переходы к демократии: попытка динамической модели, Полис, 1996, № 5:

[23] Տե՛ս **Beichelt T.,** Die slawischen GUS-Staaten zwischen Autokratie und Demokratie, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/2001/01-05-Beichelt.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Pickel G., Jacobs J.,** Einstellungen zur Demokratie und zur Gewährleistung von Rechten und Freiheiten in den jungen Demokratien Mittel- und Osteuropas, https://www.europa-

Արևմտյան հեղինակները հետաքրքրություն են ցուցաբերել նաև հայկական պառլամենտարիզմի ուսումնասիրմանը՝ Հայաստանում խորհրդարանի և խորհրդարանականության զարգացումը ներկայացնելով հետխորհրդային փոխակերպման համատեքստում: Գերմանացի հետազոտող Շ. Մարշալը, ուսումնասիրելով Արևելյան Եվրոպայի երկրների ժողովրդավարացման գործընթացները 1980-1990-ական թթ., վեր է հանել խորհրդարանի իրականացրած դերակատարության առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում:

Գերմանացի մեկ այլ տեսաբան Մ. Ֆրայզեն համապարփակ ներկայացրել է ժողովրդավարության արտաքին աջակցությունը հետսոցիալիստական փոխակերպվող երկրներում[24] համանուն գրքում:

Չնայած ՀՀ-ում թեմայի տարբեր կողմերի վերաբերյալ արժեքավոր գիտական հրապարակումների առկայությանը՝ փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի զարգացման առանձնահատկությունների և միտումների վերհանմանը նվիրված աշխատանքները մեծ թիվ չեն կազմում: Թեմայի ուսումնասիրմամբ մասամբ հարստացվում է առկա բացը: Շնորհիվ իրավաքաղաքական բնույթի՝ պառլամենտարիզմը լայնորեն հետազոտվել է իրավագիտական հարացույցի շրջանակներում: Դրա սահմանադրական-իրավական հիմքերը ՀՀ-ում

---

uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/2001/01-09-Pickel-Jacobs.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Pickel G., Pickel S.,** Politische Partizipation und politische Einstellungen der osteuropäischen Transitionsstaaten im Vergleich, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/2000/00-04-Pickel-Pickel.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Szabo M.,** Proteste und soziale Kosten des Systemwandels in der postkommunistischen Demokratie: der Fall Ungarn, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/2000/00-07-Szabo.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Thomas E.,** Systemtransformation als umfassender institutioneller Wandel: Die fünf Dimensionen der Transformationsprozesse in Osteuropa, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/2000/00-12-Eger.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Jacobs J.,** Einstellungen zur politischen Ordnung in Transformationsländern Lebenssituation und zentrale Einstellungen als Determinanten in den Neuen Bundesländern, Polen, Tschechien und Ungarn, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1999/99-14-Jacobs.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Wagener H.-J.,** Rückkehr nach Europa, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1999/99-16-Wagener.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Aleksandrowicz D.,** Kulturelle Kosten der Transformation, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1998/98-03-Aleksandrowicz.pdf. հասանելի՝ 15.04.2020: **Schulders G.,** Die Besonderheiten der asiatischen Transformationsprozesse, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1998/98-14-Schulders.pdf, հասանելի՝ 15.04.2020: **Wagener H.-J.,** Transformation als historisches Phänomen, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1996/96-7-Wagener.pdf. հասանելի՝ 15.04.2020:

[24] Տե՛ս **Freise M.,** Externe Demokratieförderung in postsozialistischen Transformationsstaaten, https://books.google.am/books?id=p8Zd0vNhjNcC&pg=PA70&lpg=PA70&dq=Parlamentarismus+in+Transformationsstaaten&source=bl&ots=nKCSXJsWdM&sig=ACfU3U0arjyV5e3SvBxoE5vDkW8txFzd_A&hl=ru&sa=X&ved=2ahUKEwiniK2fq4_wAhXIwosKHe1bCzYQ6AEwEnoECAUQAw#v=onepage&q=Parlamentarismus%20in%20Transformationsstaaten&f=false, հասանելի՝ 25.03.2018:

մեծապես քննարկվել են հայրենական իրավագիտական գրականության մեջ: Այս առումով հարկ ենք համարում առանձնահատուկ հիշատակել Ա. Վաղարշյանի[25], Ա. Հարությունյանի[26] աշխատությունները:

Հիմնահարցի տարբեր կողմերին են առնչվում ՀՀ քաղաքագիտական դպրոցի վաստակաշատ ներկայացուցիչներ՝ Ա. Ենգոյանի[27], Գ. Պետրոսյանի[28], Հ Մանուչարյանի[29], Ա. Ալեքսանյանի[30], Խ. Գալստյանի[31], Ա. Մարգարովի[32], Գ. Քեռյանի[33], Մ. Մարգարյանի[34], Հ. Հակոբյանի[35], Հ. Շաքարյանի[36]՝ կարևոր նշանակություն ունեցող գիտական աշխատանքները:

Ա. Մարգարովը «Ինստիտուցիոնալ փոխակերպումը Հայաստանում 1990-2010 թթ.» հոդվածում վերլուծել է կիսանախագահական համակարգի զարգացման դինամիկան և դրա գործառնության առանձնահատկությունները[37]: Նշված հիմնախնդրին են նվիրված հեղինակի մի շարք այլ աշխատություններ:

Ա. Ենգոյանը «Եվրասիական միության երկրների գաղափարախոսական ուղենիշները» հոդվածում դիտարկել է

---

[25] Տե՛ս **Վաղարշյան Ա.,** Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Եր., 2003 թ.:

[26] Տե՛ս **Հարությունյան Ա.,** Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, http://etd.asj-oa.am/4403/1/Atenaxosutyun_Alexander_Harutyunyan.pdf. հասանելի՝ 15.04.2019:

[27] Տե՛ս **Енгоян А.,** Идеологические парадигмы переходного периода в Армении, Вестник ЕГУ, Международные отношения, Политология, 2013:

[28] Տե՛ս **Պետրոսյան Գ.,** Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917թ. փետրվար – 1918 թ. հունիս), Երևան, 2018:

[29] Տե՛ս **Մանուչարյան Հ.,** Հայոց պետության կառավարման և կառուցվածքի ձևերի՝ հնդկահայ լուսավորիչների հայեցակարգը, «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» 134.6, Երևան 2011:

[30] Տե՛ս **Ալեքսանյան Ա.,** Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին, Ե., ԵՊՀ, 2019:

[31] Տե՛ս **Գալստյան Խ.,** Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդավարության անցման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Ե., 2016, № 1 (19):

[32] Տե՛ս **Մարգարով Ա.,** Ժողովրդավարություն և ժողովրդավարացում, «Քաղաքագիտություն» ուս. ձեռնարկ, ԵՊՀ, 2006:

[33] Տե՛ս **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Երևան, 2002:

[34] Տե՛ս **Մարգարյան Մ.,** ՀՀ քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2017, թիվ (2):

[35] Տե՛ս **Հակոբյան Հ.,** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007:

[36] Տե՛ս **Շաքարյան Հ.,** Պառլամենտարիզմը իբրև մշակութաբանական երևույթ, Եր., 1995:

[37] Տե՛ս **Маркаров А.,** Институциональная трансформация в Армении в 1990-2010 гг., http://www.ysu.am/files/05A_Markarov.pdf. հասանելի՝ 15.04.2019:

հետխորհրդային հասարակությունների համար ամենաընդունելի գաղափարական համակարգի հիմնահարցը[38]:

ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանն ուղղված գործնական առաջարկների ներկայացումը հնարավոր է դարձել փոխակերպման գործընթացում գտնվող տարբեր խումբ երկրների փորձի ուսումնասիրման արդյունքում:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում պառլամենտարիզմի՝ հիմնականում իրավական կողմին անդրադարձող աշխատությունների առկայությունը և քաղաքագիտական հետազոտությունների սակավությունը պայմանավորված է թեմայի նորույթ լինելու հանգամանքով, քանի որ հիմնահարցի առանձին կողմերը քաղաքագիտական հետազոտության առարկա են դարձել 1990-ական թթ. սկսած միայն: Շատ չեն նաև քաղաքագիտական ուսումնասիրությունները ԱԺ-ի գործունեության վերաբերյալ: Դրանք, որպես կանոն, փաստագրական-նկարագրողական բնույթի են:

Բացի վերոհիշյալ աշխատություններից՝ հետազոտության ուսումնասիրության իրավանորմատիվային հիմքը կազմելիս օգտվել ենք ՀՀ օրենքներից և իրավական ակտերից[39], պաշտոնական տվյալներից, ինչպես նաև համացանցային մի շարք աղբյուրներից:

Հետազոտության նպատակը փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի կայացման էությունն ու հիմնական առանձնահատկությունները բացահայտելն է, ինչպես նաև զարգացման միտումները վերհանելը:

Աշխատանքում առաջադրվում են հետևյալ **հետազոտական խնդիրները.**

- բացահայտել պառլամենտարիզմի էությունը վերջինիս ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական տարբեր խումբ սահմանումների և մեկնաբանությունների ուսումնասիրման միջոցով:
- Բացահայտել պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը՝ դրա զարգացման փուլերի հաջորդականության և պատմական ձևերի ներկայացման համատեքստում:

---

[38] Տե՛ս **Енгоян А.,** Идеологические ориентиры стран Евразийского союза, http://www.ysu.am/files/02A_Engoyan_r.pdf. հասանելի՝ 14.06.2018:

[39] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Ե., 2016, https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510. 06.12.2015: ՀՀ ընտրական օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153062. 07.05.2021: «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=337. 22.10.1996: «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016, https://www.gov.am/u_files/file/kron/hasarakakan%20kazm_.pdf. հասանելի՝ 07.07.2019: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149243. 29.12.2020:

- Ներկայացնել ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը:
- Վերլուծել «քաղաքական փոխակերպում» հասկացության վերաբերյալ գիտական տարբեր մոտեցումները, դրան բնորոշ հատկանիշները:
- Դիտարկել Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային տարբեր երկրներում փոխակերպման գործընթացների բնույթը քաղաքական անցման համատեքստում:
- Վերլուծել Արևելյան Երոպայի երկրներում խորհրդարանական համակարգերի կազմավորման նախադրյալները:
- Դիտարկել հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի ձևավորման ասպեկտները, արժևորել կառավարման ձևի ընտրությունը որպես ինստիտուցիոնալ հիմնախնդիր:
- Գնահատել սահմանադրական բարեփոխումների տրամաբանությունը ՀՀ-ում, ցույց տալ դրանց ազդեցությունը պառլամենտարիզմի կայացման վրա:
- Վեր հանել ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող պատճառները:
- Բացահայտել ՀՀ կուսակցական համակարգի արդիականացման հիմնախնդիրները և ներկայացնել այդ համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում:
- Վեր հանել պառլամենտարիզմի զարգացման հրամայականները ՀՀ-ում:

Հետազոտության մոթոդաբանությունը: Պատմական մեթոդը թույլ է տալիս պառլամենտարիզմը դիտարկել պատմական տարբեր ժամանակահատվածներում: Տրանսֆորմացիոն երկրներում պառլամենտարիզմի զարգացման և գործառնման ժամանակակից փորձը պարարտ հող է նախապատրաստում համեմատական վերլուծության համար, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում վեր հանել յուրաքանչյուր երկրի հաջողության կամ էլ ձախողման պատճառները և այլն:

Համեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել տալ ներկայացուցչական մարմինների գործառնման գնահատականը, դրանց փոխգործակցությունը քաղաքական այլ ինստիտուտների հետ, ինչպիսիք են կուսակցությունները, նախագահի ինստիտուտը, կառավարությունը: Բացի դրանից՝ բացահայտվել են հետսոցիալիստական երկրներում պառլամենտարիզմի զարգացման օրինաչափությունները, ընդհանրություններն ու տարբերությունները:

Աշխատանքում օգտագործվել է ինստիտուցիոնալ մեթոդը: Այս մեթոդի կիրառմամբ մեծ ուշադրություն է դարձվել քաղաքական

ինստիտուտներին՝ խորհրդարան, գործադիր իշխանության մարմիններ՝ նախագահ, կառավարություն, կուսակցություններ, ընտրական ընթացակարգեր, իշխանությունների տարանջատման մեխանիզմներ, սահմանադրական կարգ և այլն: Այս մոտեցման շրջանակներում պառլամենտարիզմը դիտարկվում է որպես քաղաքական ինստիտուտների և հարաբերությունների առանձնահատուկ համակարգ, որի գործառնումը պայմանավորված է ներքին և արտաքին տարբեր գործոններով: Արտաքին, միջազգային գործոնների տակ հասկացվում են համաշխարհային քաղաքական զարգացման ժամանակակից միտումները, որոնք ազդում են փոխակերպման պայմաններում գտնվող ոչ ժողովրդավարական կամ էլ ձևական ժողովրդավարական վարչակարգեր ունեցող պետությունների իշխանությունների և կառավարման բնույթի վրա: Ներքին գործոններ ասելով պետք է հասկանալ քաղաքական փոխգործակցության այն առանձնահատուկ նորմերը, մեթոդները, հարաբերությունները, որոնց միջոցով տեղի է ունենում պառլամենտարիզմի՝ որպես քաղաքական և իրավական հարաբերությունների յուրահատուկ տարատեսակի ձևավորումը և որոշվում է տեղը հասարակության քաղաքական համակարգում:

Կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդը հնարավորություն է տվել բացահայտել քաղաքական համակարգի տարրերի ֆունկցիոնալ կախվածությունը, պետական իշխանության ինստիտուտների կապն ու փոխգործակցությունը: Դիալեկտիկական մեթոդի օգտագործման շնորհիվ խորհրդարանական համակարգի տարբեր քաղաքական ինստիտուտների և դերակատարների միջև զարգացող հարաբերությունների քննադատական վերլուծություն է իրականացվել՝ բացահայտելով դրանց երբեմն հակասական բնույթը:

Համակարգային մեթոդի կիրառմամբ հետսոցիալիստական երկրներում տեղի ունեցող փոխակերպման գործընթացները դիտարկել են ամբողջության մեջ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է նաև կոնտենտ-անալիզի մեթոդը, որն աշխատանքին ամբողջական տեսք տալու հնարավորություն է ընձեռել:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի առանձնահատկությունների բացահայտման և միտումների վերհանման անհրաժեշտությամբ: Ըստ այդմ՝ ատենախոսության մեջ գիտական նորույթ պարունակող արդյունքներն են՝

1. Խմբավորելով գիտական գրականության մեջ պառլամենտարիզմի վերաբերյալ առկա սահմանումները՝ ներկայացվել է երևույթի բացատրման սեփական մեկնաբանությունը՝ շեշտը դնելով դրա համալիր բնույթի վրա:

2. Պատմական տարբեր ժամանակահատվածներում պառլամենտարիզմի էվոլյուցիայի ուսումնասիրման արդյունքում վեր են հանվել դրա ակունքներում ընկած տեսահայեցակարգային հիմքերը՝ ներկայացուցչականության տեսությունը և իշխանությունների տարանջատման ուսմունքը:
3. Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրների ուսումնասիրման արդյունքում հիմնավորվել է, որ այն երկրներում, որտեղ ի սկզբանե քաղաքական և սահմանադրահիրավական բարենպաստ նախադրյալներ են եղել պառլամենտարիզմի կայացման համար, այն զարգացում է ապրել, իսկ այնտեղ, որտեղ ժողովրդավարական ավանդույթները թույլ հիմքեր են ունեցել, պառլամենտարիզմի զարգացումը մի շարք խոչընդոտների է բախվել:
4. Վեր են հանվել հետխորհրդային երկրների պառլամենտարիզմին բնութագրական նմանությունները: Բացահայտվել է հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի զարգացման միտումների և այն ընդգրկող երկրների փոխակերպման առանձնահատկությունների միջև կապը: Հիմնավորվել է, որ տարածաշրջանում պառլամենտարիզմի բնորոշ գծերից, միևնույն ժամանակ զարգացմանը խոչընդոտող առավել սուր խնդիրներից է իշխանության ճյուղերի կախվածությունը գործադիր թևից, մասնավորապես նախագահի ինստիտուտից:
5. Ցույց է տրվել, որ անցման փուլում պետական կառավարման համակարգի խորհրդային և արևմտյան մոդելների միաժամանակյա կիրառումն ու արագ ժողովրդավարացման տենդագին ձգտումները առավել հաճախ հիբրիդային վարչածևերի են հանգեցրել:
6. Հիմնավորվել է, որ պառլամենտարիզմի կայացման համար կառավարման համակարգի ընտրությունը կարևոր, սակայն ոչ բավարար պայման է: Քանզի պառլամենտարիզմի զարգացում չի նշանակում սահմանափակում խորհրդարանական համակարգի ներդրմամբ, կարևոր է իշխանությունների փոխզսպումն և հակակշռումը:
7. ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացումը դիտարկվել է փոխակերպման գործընթացների պրիզմայի ներքո: Հիմնավորվել է, որ հենց փոխակերպման առանձնահատկություններով էլ պայմանավորվել է պառլամենտարիզմի զարգացումը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում:
8. Բացահայտվել են այն միտումները, որոնք նախանշվում են ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացման գործում: Ժամանակակից հայկական պառլամենտարիզմի զարգացումը տեղի է ունենում իշխանության օրենսդիր ճյուղի դերակատարության մեծացման պայմաններում: Հիմնավորվել է, որ

ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացման համար անհրաժեշտություն է կուսակցական համակարգի կայացումը՝ վերջինիս արդիականացումը պայմանավորելով հասարակության լայն փոխակերպման գործոններով, կառավարման համակարգի և քաղաքական վարչակարգի բարելավմանն ուղղված փոփոխություններով:

9. Առաջարկվել են ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող որոշակի մեխանիզմներ, որոնցից են ընտրական օրենսգրքի կատարելագործման, պատգամավոր-ընտրող երկկողմ հաղորդակցության ամրապնդման, հանրային ընկալումներում խորհրդարանի ինստիտուտի իմիջի բարձրացման անհրաժեշտությունների մատնանշումը և այլն:

Հետազոտության գործնական և տեսական նշանակությունը: Հետազոտության գործնական և տեսական նշանակությունն այն է, որ թեմայի վերաբերյալ հրապարակումներն ու կատարված եզրահանգումները կարող են նպաստել հայկական պառլամենտարիզմի կայացման գործին: Անցումային երկրներում օրենսդիր ներկայացուցչական իշխանությունը կարող է հակակշիռ լինել ավտորիտար իշխանություններին, ինչպես նաև երաշխավորել սոցիալական տարբեր խմբերի մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործին:

Պառլամենտարիզմի հիմնախնդիրը բազմաբնույթ է, հետևաբար, դրա ուսումնասիրությունը պահանջում է պառլամենտարիզմի տարբեր կառուցվածքային բաղադրիչների համապարփակ դիտարկում, ներառյալ ներկայացուցչական ինստիտուտների գործունեության սահմանադրական հիմքերի վերլուծություն, ընտրական մասնակցության առանձնահատկությունների վերհանում, քաղաքական այլ ինստիտուտների հետ ներկայացուցչական մամինների հարաբերությունների բացահայտում և այլն: Սա կարող է նպաստել պառլամենտարիզմի մասին գիտելիքների ավելացմանը: Գործնական կիրառելիության տեսանկյունից ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացությունները կարող են օգտակար լինել պետական իշխանության քաղաքական և իրավական հիմքերի զարգացման, ՀՀ քաղաքական համակարգի կատարելագործման համար: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել քաղաքագիտական տարբեր դասընթացների ընթերցման ժամանակ, գիտակրթական գործունեության ոլորտում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալն է 160 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնախնդրի գիտական ուսումնասիրության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև ատենախոսության գիտական նորույթն ու առաջարկվող հիմնախնդիրների կիրառման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Պառլամենտարիզմի հետազոտման տեսահայեցակարգային հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթաբաժիններից, որոնցում բացահայտվում է պառլամենտարիզմի էությունը:

Առաջին՝ **«Պառլամենտարիզմի ծագումն ու տեսահայեցակարգային հիմքերի էվոլյուցիան»** գլխում վեր են հանվում պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը՝ դրա զարգացման փուլերի հաջորդականության և պատմական ձևերի ներկայացման համատեքստում: Բացահայտվում է, որ դրա զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել ներկայացուցչականության տեսությունը և իշխանությունների տարանջատման ուսմունքը:

Երկրորդ՝ **«Պառլամենտարիզմ» հասկացության մեկնաբանությունները»** ենթագլխում քննարկվում են «պառլամենտարիզմ» ֆենոմենի մեկնաբանությունները: Պառլամենտարիզմը սոցիալ-քաղաքական և իրավաքաղաքական բարդ, բազմաչափ ֆենոմեն է: Այդ է պատճառը, որ այն ինչպես քաղաքագետների, այնպես էլ իրավագետների, պատմաբանների, սոցիոլոգների հետազոտման տիրույթում է: Շնորհիվ իր երկակի՝ իրավաքաղաքական բնույթի և բազմաշերտ բովանդակային կառուցվածքի՝ պառլամենտարիզմի վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ կարծիքներ: Այս ենթագլխում բացահայտվում է պառլամենտարիզմի էությունը վերջինիս ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական տարբեր խումբ սահմանումների և մեկնաբանությունների ուսումնասիրման միջոցով:

Երրորդ՝ **«Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդիրը»** ենթագլխում, դիտարկելով ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը, հիմնավորվում է, որ իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Ժողովրդավարական կարգի սպառնալիքի պարագայում հենց խորհրդարանն է հարվածի տակ ընկնում: Առանց իրական գործառնող խորհրդարանի անհնար է կառուցել

ժողովրդավարական իրավական պետություն, ստեղծել օրենսդրության և իրավունքի արդյունավետ համակարգ, հասնել քաղաքական կուսակցությունների զարգացմանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Պառլամենտարիզմի կայացման նախադրյալները փոխակերպվող հասարակությունների ժողովրդավարացման համատեքստում»** գլխում ներկայացվում են «փոխակերպում» հասկացության վերաբերյալ գիտական տարբեր մոտեցումները, դրան բնորոշ հատկանիշները, դիտարկվում է տարբեր երկրներում փոխակերպման գործընթացների բնույթը քաղաքական անցման համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ **«Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրները»** ենթագլխում վերլուծվել են Արևելյան Երոպայի երկրներում խորհրդարանական համակարգերի կազմավորման նախադրյալները: Պարզվել է, որ Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրները ընդունել են «իշխանությունների տարանջատման եվրոպական մոդելը: Այստեղ չկան նախագահական հանրապետություններ: Այս երկրները կամ մաքուր խորհրդարանական հանրապետություններ են կամ էլ հանրապետություններ, որոնցում պետության գլուխը ընտրվում է բնակչության կողմից, սակայն կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում վերջինիս առաջ:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Պառլամենտարիզմի առանձնահատկությունները հետխորհրդային երկրների փոխակերպման պայմաններում»** ենթագլխում, դիտարկելով հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի ձևավորման ասպեկտները, արժևորվել է կառավարման ձևի ընտրությունը որպես ինստիտուցիոնալ հիմնախնդիր: Հիմնավորվել է, որ հետխորհրդային տարածաշրջանի երկրներում, բացի Բալթյան երկրներից, փոխակերպման գործընթացը դեռևս չի ավարտվել: Ըստ այդմ՝ խորհրդարանի ինստիտուտը զարգացման անհրաժեշտություն ունի, քաղաքական համակարգերը դեռևս վերջնական տեսք չեն ստացել: Սրա մասին են վկայում տարածաշրջանի երկրներում կառավարման ձևերի հետևողական կատարելագործման գործընթացները, սահմանադրական փոփոխությունների իրականացումը, երբեմն էլ նոր սահմանադրությունների ընդունումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Պառլամենտարիզմի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում»** գլուխը բաղկացած է երկու ենթաբաժիններից, որոնցում դիտարկվում են պառլամենտարիզմի զարգացման հրամայականները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ գլխի առաջին՝ **«Պառլամենտարիզմի զարգացման միտումները ՀՀ-ում»** ենթագլխում գնահատվում է սահմանադրական բարեփոխումների տրամաբանությունը, ցույց է տրվում դրանց ազդեցությունը պառլամենտարիզմի կայացման վրա: Ժամանակակից հայկական պառլամենտարիզմի էվոլյուցիայի վերլուծության, խորհրդարանական ութ գումարումների կազմերի գործունեության ուսումնասիրության հիման վրա վեր են հանվել հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող որոշ գործոններ, ինչպես նաև մատնանշվել դրական միտումներ:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ՝ **«Կուսակցական համակարգի կայացումը որպես պառլամենտարիզմի զարգացման նախադրյալ ՀՀ-ում»** ենթագլխում հիմնավորվում են ՀՀ կուսակցական համակարգի արդիականացման հիմնախնդիրները և ներկայացվում այդ համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում:

Եզրակացությունում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից, մասնավորապես առաձնացվում են հետևյալները.

- պառլամենտարիզմը սոցիալ-քաղաքական և իրավաքաղաքական բարդ, բազմաչափ ֆենոմեն է: Հիմնախնդիրը արդիական է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան քաղաքագիտական հանրության շրջանակներում: Շնորհիվ իր երկակի՝ իրավաքաղաքական բնույթի և բազմաշերտ բովանդակային կառուցվածքի՝ պառլամենտարիզմի էության վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ կարծիքներ: Ուստի զարմանալի չէ, որ գիտական գրականության մեջ չկա դրա սահմանման վերաբերյալ մեկ միասնական մոտեցում, իսկ վերջինիս ժամանակ շատ հաճախ ի հայտ են գալիս մեթոդաբանական բնույթի մի շարք խնդիրներ: Պառլամենտարիզմի մասին դատողություններ անելիս, առավել ևս սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ այն պատմական երևույթ է և յուրաքանչյուր փուլում տարբեր դրսևորումներ է ունեցել:
- Վերլուծելով քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի տեսության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները՝ կարելի է առանձնացնել ծայրահեղական երկու դիրքորոշում: Առաջին խմբի ներկայացուցիչները բացարձակացնում են խորհրդարանի դերը, գերարժևորում դրա ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Հետազոտողների երկրորդ խումբը վստահ է, որ պառլամենտարիզմի պայմաններում խորհրդարանը իշխանության մնացած մարմիններին համահավասար իրավասությունների է տիրապետում: Մենք գտնում ենք, որ առավել նպատակահարմար է շեշտը դնել «պառլամենտարիզմ» ֆենոմենի

համալիր բնույթի վրա՝ այն դիտարկելով գործող քաղաքական համակարգի ամբողջության լույսի ներքո, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխկապվածության և փոխկախվածության համատեքստում:

- Համաշխարհային քաղաքակրթության զարգացման փորձը ցույց է տալիս, որ իշխանության հատկություններից է կենտրոնացման ձգտումը: Եթե գործադիր իշխանությունը ընդլայնում է իր լիազորությունները, ապա դա, որպես կանոն, հանգեցնում է միանձնյա դիկտատուրայի: Օրենսդիր մարմնի ձեռքում իշխանության կենտրոնացնումը վերածվում է կոլեկտիվ տիրանիայի: Քաղաքական մտքի պատմությունը ցույց է տվել, որ մեկ անձի կամ մեկ կուսակցության իշխանությունը, որը սահմանափակված չէ, չի կարող բացասական հետևանքների չբերել:
- Ցանկացած երկրում պառլամենտարիզմի զարգացման վրա հսկայական ազդեցություն են գործում տվյալ պետությանը բնորոշ քաղաքական վարչակարգի յուրահատկությունները, հասարակության սոցիալ-պատմական զարգացածության աստիճանը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ որքան ցածր է քաղաքական մշակույթի մակարդակը, մարդկանց քաղաքական գիտակցության աստիճանը, այնքան պառլամենտարիզմի հիմքերը խարխուլ են:
- Պառլամենտարիզմի հայեցակարգային հիմքերի ծանոթացումը ցույց է տալիս, որ դրա զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել ներկայացուցչականության տեսությունը և իշխանությունների տարանջատման ուսմունքը: Ներկայացուցչականության գաղափարը միշտ էլ դրված է եղել իշխելու իրավունքի, տիրապետման հիմքում ինչպես ժողովրդավարության, այնպես էլ միապետության կամ էլ արիստոկրատիայի պայմաններում: Արևմտաեվրոպական քաղաքակրթության ներքո ներկայացուցչականության խորհրդարանական տիպը զարգացել է հետևյալ գաղափարների վրա. ներկայացուցչական մարմինը պետք է հենվի ոչ թե մեկ անձի, այլ բազմաթիվ անձանցից բաղկացած ինստիտուտի վրա, ձևավորվի ընտրությունների միջոցով, խորհրդարանականները պետք է կարողանան ազատ բանավիճել միմյանց հետ և կաշկանդված չլինել իրենց որոշումներում:
- Իշխանության ճյուղերի հավասարակշռության պահպանումը պառլամենտարիզմի հիմնական սկզբունքներից է, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է գործեն ինքնուրույն և միմյանցից կախված լինեն այնպես, որ ոչ մեկը չգերիշխի մյուսի նկատմամբ: Իշխանության բաշխումը մի քանի պետական մարմինների միջև էականորեն նվազեցնում է դրա ուզուրպացման և միանձնյա տնօրինման ռիսկերը, հնարավորություններ ստեղծում ամենաթողության ու անօրինականության բացառման համար:

Միայն այս դեպքում է հնարավոր երաշխավորել «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սկզբունքի գործառնումը:

- Պառլամենտարիզմի վերլուծության առանձնահատկություններից մեկն այն է, որ ներկայումս հնարավոր չէ այն դիտարկել ժողովրդավարության հիմնահարցի շրջանակից դուրս: Իրական պառլամենտարիզմ կարող է գոյություն ունենալ միայն ժողովրդավարության պայմաններում, երբ խորհրդարանը՝ պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրատարրը, դառնում է այն վայրը, որտեղ տեղի է ունենում դեմոկրատիայի տեսության և պրակտիկայի միաձուլում: Ժողովրդավարությունը ժողովրդի կամքը արտահայտող վարչակարգ է, խորհրդարանը՝ ժողովրդի կամքն արտահայտող մարմին: Պառլամենտարիզմը ծագում և գոյություն է ունենում այն ժամանակ, երբ խորհրդարանն օժտվում է օրինաստեղծ լիազորություններով, կառավարության ձևավորման և վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներով:
- Իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Ժողովրդավարական կարգի սպառնալիքի պարագայում հենց խորհրդարանն է հարվածի տակ ընկնում: Առանց իրական գործառնող խորհրդարանի անհնար է կառուցել ժողովրդավարական իրավական պետություն, ստեղծել օրենսդրության և իրավունքի արդյունավետ համակարգ, հասնել քաղաքական կուսակցությունների զարգացմանը:
- Որևէ պետության կողմից խորհրդարանական կառավարման համակարգ հռչակելը դեռևս չի նշանակում այնտեղ խորհրդարանական մշակույթի զարգացում: Այսօր աշխարհում նախագահական կառավարման համակարգ ունեցող երկրներ կան, որոնցում պառլամենտարիզմն առավել զարգացած է: Միևնույն ժամանակ այն երկրներում, որտեղ ժողովրդավարությունը գտնվում է կայացման փուլում, անգամ քիչ արդյունավետությամբ, մասամբ աշխատող խորհրդարանը իրականացնում է բավականին օգտակար, հավասարակշռող գործառույթ ոչ միայն պետական իշխանության համակարգում, այլև հասարակական փոխհարաբերություններում, նրանց միջև հաղորդակցության յուրօրինակ մեխանիզմ է հանդիսանում, որը համախմբում է ժողովրդին:
- Արևելյան Եվրոպայի երկրներում ի սկզբանե քաղաքական և սահմանադրաիրավական պայմաններ էին ստեղծվել պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման համար: Հատկապես որոշիչ նշանակություն ուներ մինչկոմունիստական շրջանում գերակայած կայուն քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ավանդույթների գործոնը: Տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերը, անկախ նրանից

կիսանախագահական են, թե խորհրդարանական, բնորոշվում են խորհրդարանի՝ որպես իշխանության գլխավոր օրենսդիր և ներկայացուցչական մարմնի գերակա դերի առանձնահատկությամբ: Խորհրդարանների լիազորությունների ծավալն այստեղ բավականին լայն է, սակայն հավասարակշռված իշխանության մյուս ճյուղերի հետ հարաբերություններում:

- Հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի զարգացման միտումները հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ընդգրկող երկրների առանձնահատկություններն ու դրանցում արձանագրված անցումային իրողությունները: Այստեղ պառլամենտարիզմի առանձնահատկությունները պայմանավորված են քաղաքական փոխակերպման գործընթացների բազմակողմանիությամբ և բազմաշերտությամբ: Տարածաշրջանի երկրներում պառլամենտարիզմի բնորոշ գծերից, միևնույն ժամանակ զարգացմանը խոչընդոտող առավել սուր խնդիրներից է իշխանության ճյուղերի կախվածությունը գործադիր թևից, մասնավորապես նախագահից: Տարիներ շարունակ նախագահի դոմինանտ դերը, քաղաքական կյանքը՝ վերջինիս ձեռքում կենտրոնացնելը թուլացրել է իշխանության մյուս ճյուղերի նշանակությունը և ինչ-որ չափով խանգարել ժողովրդավարության խորացման գործընթացին: Հարկ է նկատի ունենալ, որ պառլամենտարիզմի կայացումն ու զարգացումը հետխորհրդային տարածության երկրներում տեղի է ունենում ոչ թե կայուն, այլ փոխակերպվող քաղաքական գործընթացի պայմաններում, որին հատուկ է անկայունությունն ու անսպասելիությունը: Բացի դրանից՝ հետխորհրդային նորանկախ պետություններում պառլամենտարիզմի զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցություն է ունեցել փոխակերպման առաջին տարիներին իշխանություն ստացած խորհրդային կուսակցական դպրոցներով անցած քաղաքական առաջնորդների վարքը: Պառլամենտարիզմը զարգանում է այնտեղ, որտեղ կայուն ժողովրդավարական, իրավական, մշակութային ավանդույթներ և սոցիալ-տնտեսական ու քաղաքական նպաստավոր պայմաններ կան: Ուստի պատահական չէ, որ թուլացած խորհրդային կառուցակարգերի և երբեմն սկզբունքորեն դրանց հակասող արևմտյան մոդելների միախառնումից ձևավորվել են հիբրիդային համակարգեր: Կարող ենք փաստել, որ հետխորհրդային տարածաշրջանի երկրներում փոխակերպման գործընթացը դեռևս չի ավարտվել: Ըստ այդմ՝ խորհրդարանի ինստիտուտը զարգացման անհրաժեշտություն ունի, քաղաքական համակարգերը դեռևս վերջնական տեսք չեն ստացել:
- Պառլամենտարիզմի տեսական-մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրումը հնարավորություն է տվել բացահայտել նշված երևույթի

հիմնական բնութագրիչները ՀՀ-ում: Պառլամենտարիզմի ձևավորման շրջանը, ինչպես հետխորհրդային մյուս փոխակերպվող երկրների պարագայում, համընկնում էր ՀՀ-ում բազմավեկտոր, փոխկապված իրադարձություններով լեցուն քաղաքական փոխակերպման գործընթացի հետ: Քաղաքական փոխակերպման ընթացքը կանխորոշող կարևոր գործոնների դերում էին քաղաքական և իշխանական հարաբերությունների բնույթը, պատմական ավանդույթները, հայաստանյան հասարակության սոցիալական դրությունը, քաղաքացիների քաղաքական մասնակցության աստիճանն ու քաղաքական գիտակցության մակարդակը, սոցիալ-պատմական, հոգևոր-մշակութային, քաղաքակրթական և այլ նախապայմանները: Նշված նախադրյալների առկայությամբ պայմանավորվեց նաև մեր երկրում ժողովրդավարական արժեքների և գաղափարների իրագործումը: Բացի դրանից՝ ՀՀ-ում քաղաքական փոխակերպման բարդ ու հակասական գործընթացն ուղեկցվում էր քաղաքական կյանքի կոնֆլիկտայնության բարձր աստիճանով, իշխանության անձնավորվածությամբ, փոխակերպման գործընթացներում իշխանական քաղաքական առաջնորդների միանձնյա որոշումների կայացման դրսևորումներով, պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների կոնֆլիկտային հարաբերություններով: Քաղաքական փոխակերպման վերը նշված առանձնահատկությունները մեծապես ազդեցին նորանկախ ՀՀ-ում պառլամետարիզմի կայացման ընթացքի և արդյունքների վրա:

- Ժամանակակից հայկական պառլամենտարիզմի էվոլյուցիայի վերլուծության արդյունքում վեր ենք հանել հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող որոշ գործոններ, ինչպես նաև մատնանշել ենք դրական միտումները: Առաջինի թվում կարելի է նշել ուժեղ կենտրոնացված իշխանության ձգտումը, քաղաքական մշակույթի և գիտակցության ոչ բարձր մակարդակը, հայրիշխանական մշակույթի արմատավորվածությունը: Հետանկախության շրջանում հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խանգարող գործոններից են եղել նաև խորհրդարանական ուժեղ ընդդիմության բացակայությունը, ձևական կոալիցաների ձևավորումը, ընդդիմադիր կուսակցությունների միջև կոնսենսուսի բացակայությունը, բնակչության վստահության ոչ բարձր մակարդակը ներկայացուցչական իշխանության նկատմամբ: Հայկական պառլամենտարիզմի զարգացման վրա ազդել է խորհրդարանականների՝ իրենց աշխատանքին ոչ որպես մասնագիտության վերաբերվելը:
- Դրական գործոնների թվում կարելի է նշել խորհրդարանի պրոֆեսիոնալացումը: ԱԺ-ի առանձին պատգամավորներ սովորել են համագործակցել զանգվածային լրատվության միջոցների, քաղաքացիական

հասարակության սեկտորի հետ, աչքի են ընկնում օրենսդրական գործունեությամբ զբաղվելու ունակություններով, լավ կազմակերպվածությամբ, կարգապահությամբ, հստակ գործողությունների պլանով, սեփական ծրագրերով: Նկատվում է խորհրդարանականների երիտասարդացման, միջին դասի ներկայացուցիչների ավելացման միտում: Միևնույն ժամանակ պառլամենտարիզմի զարգացումը ՀՀ-ում որոշակիորեն եվրոպական միտումներ ունի:

- Ներկայումս խորհրդարանն ավելի շատ հումանիտար ոլորտի ներկայացուցիչներով է համալրված: Այս առումով կարելի է ինչպես կրթական որոշակի ցենզեր, այնպես էլ ոլորտային քվոտաներ սահմանել, որպեսզի խորհրդարան մուտք գործեն տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ: Արդյունքում տեղի կունենա պատգամավորական կորպուսի կազմի կատարելագործում, խորհրդարանականների կոմպետենտության մակարդակի բարձրացում: Պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող խնդիրների լուծումը հնարավոր է միայն իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության համատեղ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ: Բացի դրանից՝ անհրաժեշտ է զսպումների և հակակշիռների այնպիսի համակարգ, որի պայմաններում իշխանության ճյուղերից և ոչ մեկը չի կարողանա իր կամքը թելադրել մյուսին: Այս դեպքում անցում կկատարվի որակապես նոր քաղաքական համակարգի, քաղաքական վարքի և մշակույթի: Անհրաժեշտ է ամրապնդել և խորացնել միապալատ խորհրդարանի համակարգը: Ներկայացուցչականության երաշխավորումը չպետք է սկսի և ավարտվի ընտրություններով: Պատգամավորները պետք է հասկանան հասարակական տրամադրությունները, ժողովուրդ-խորհրդարան կապը պիտի ամուր լինի ողջ գումարման ընթացքում:
- Հասարակության քաղաքական համակարգում պառլամենտարիզմի գոյության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ խորհրդարանը՝ օրենսդիր և ներկայացուցչական մարմինը, ձևավորված է քաղաքական կուսակցությունների միջև մրցակցային պայքարի հիման վրա, ուստի շատ կարևոր է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանն ուղղված գործողությունների իրականացումը:
- Խորհրդարանի լեգիտիմության բարձրացմանը կարող է ծառայել երկրում հասուն քաղաքացիական հասարակության առկայությունը: Քաղաքացիների քաղաքական մասնակցությունը, վերջիններիս ընտրական ակտիվությունը խթանելու համար անհրաժեշտ է աշխատանք տանել նրանց քաղաքական գիտակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
- Պլյուրալիստական ժողովրդավարության պայմաններում ժամանակակից խորհրդարանի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ուժեղ և հեղինակավոր կուսակցություններով: ՀՀ

կուսակցական համակարգն արդիականացման կարիք ունի: Այն կայուն է, սակայն հայաստանյան կուսակցությունները դեռևս թույլ են և չունեն հստակ սոցիալական և գաղափարական հենք: Խորհրդարանական կուսակցությունները հասարակության կողմից ընկալվում են որպես ոչ ինքնուրույն, գործադիր իշխանությունից կախված ուժեր, իսկ արտախորհրդարանական կուսակցությունները չունեն բավարար ռեսուրսներ և հանրային աջակցություն: Արդյունքում կորչում է քաղաքական մրցակցությունը, առաջանում են կադրային խնդիրներ, իշխանությունն անվերահսկելի է դառնում, քաղաքացիները կորցնում են հավատը քաղաքական կուսակցությունների հանդեպ:

- Հայկական կուսակցական համակարգի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն հեռու է կատարյալ լինելուց: ՀՀ կուսակցական համակարգի զարգացման վրա վնասակար ազդեցություն են ունեցել քաղաքագիտական գրականության մեջ հայտնի, այսպես կոչված, «իշխանության կուսակցությունները»: Վերջիններիս՝ քաղաքական դաշտը մենաշնորհելու քաղաքականությունը մրցակցային անհավասար պայմաններ է ստեղծել մյուս կուսակցությունների համար: Անհատակենտրոնության պատճառով ստեղծվել է մի իրավիճակ, երբ գաղափարական պայքարն իր տեղը զիջում է անձնական և կուսակցական շահերի բախման արդյունքում ի հայտ եկած պայքարին: Կարևոր հիմնախնդիր է կուսակցությունների ներքին ժողովրդավարության ապահովումը: ՀՀ կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածության խնդիրների թվում կարելի է նշել այն, որ հասարակության ընկալումներում կուսակցությունները՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն տարրեր, լեգիտիմության ցածր աստիճան ունեն: Կուսակցությունները պետք է դառնան քաղաքական բանավեճերի կենտրոնական դերակատարները, երկրի զարգացման համար ծրագրեր մշակողները: Դրանք պետք է լինեն քաղաքական կադրերի պատրաստման կարևորագույն մարմինները:
- Մեր հետազոտությունը առիթ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ն պառլամենտարիզմի զարգացման դեռ երկար և դժվար ճանապարհ ունի անցնելու: ՀՀ-ում զարգացած պառլամենտարիզմի մասին օրինաչափ կլինի խոսել այն դեպքում, երբ խորհրդարանը՝ օրենսդիր և ներկայացուցչական մարմինը, ձևավորված կլինի քաղաքական կուսակցությունների միջև մրցակցային պայքարի հիման վրա, իշխանության ճյուղերը հստակ տարանջատված կլինեն, պլյուրալիզմի պայմաններում կերաշխավորվեն անհատի իրավունքներն ու ազատությունները: «Թավշյա հեղափոխությունը» ՀՀ-ում հնարավորություններ է բացել նշված նպատակների իրագործման համար, սակայն դեռևս չի երաշխավորել կայուն ինստիտուցիոնալացված ժողովրդավարական վարչակարգ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Ազատյան Խ.,** «Պառլամենտարիզմ» հասկացության ըմբռնման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2018, № 2 (26), էջ 72-81:
2. **Azatyan Kh.,** Die Besonderheiten der Entwicklung des Parlamentarismus in Armenien, Springer VS, 2019, S. 151-171.
3. **Ազատյան Խ.,** Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդիրը, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2020, № 1 (31), էջ 48-60:
4. **Ազատյան Խ.,** Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրները, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու 2020, 2020, 1 (23), էջ 120-130:
5. **Ազատյան Խ.,** Կուսակցական համակարգի կայացումը որպես պառլամենտարիզմի զարգացման նախադրյալ, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2020, 5 (10), էջ 44-57:
6. **Ազատյան Խ.,** Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2020, 6 (11), էջ 118-130:

Азатян Хосровадухт Гарегиновна

Особенности и тенденции развития парламентаризма в трансформационных обществах

Резюме

Целью исследования является раскрытие сущности и основных черт становления парламентаризма, а также выделение основныхтенденций его развития в трансформирующихся обществах. Структура диссертации соответствует цели и основным задачам исследования. Оно состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы. Во введении обосновывается актуальность темы, цель и задачи исследования, академическая новизна и основные положения, подлежащие защите. Представлены теоретическая и практическая значимость диссертации, степень академической проработанности вопроса, объект и предмет исследования, а также его методология.

В первой главе диссертации – **«Теоретические и концептуальные основы исследования парламентаризма»**– выделены теоретические и концептуальные основы парламентаризма в контексте изложения последовательности этапов его развития и представления исторических форм его проявления. Сущность парламентаризма раскрывается путем изучения различных его определений и трактовок, как политического, так и правового характера.

Во второй главе диссертации – **«Предпосылки становления парламентаризма в условиях демократизации трансформирующихся обществ»**– проанализированы предпосылки становления парламентаризма в странах Восточной Европы. Исследуя аспекты становления парламентаризма на постсоветском пространстве, выбор формы правления оценивался как институциональная проблема. Было обосновано то, что процесс трансформации парламентаризма в странах постсоветского пространства, за исключением Прибалтики, еще не завершен. Соответственно институт парламента нуждается в дальнейшем развитии, политические системы не до конца разработаны. Об этом свидетельствуют процессы последовательного совершенствования форм правления в странах региона, проведение конституционных поправок, а иногда и принятие новых конституций.

Третья глава диссертации **«Проблемы развития парламентаризма в Третьей Республике Армения»** состоит из двух подглав, в которых исследуются императивы развития парламентаризма в Республике Армения. В ней оценивается логика конституционных реформ, демонстрируется их влияние на становление парламентаризма. В данной главе также обосновываются вопросы модернизации партийной системы РА и представлены тенденции развития этой системы в условиях парламентского правления в Республике Армения.

Основные выводы исследования:

1. Парламентаризм - сложное, многоаспектное общественно-политическое и политико-правовое явление. В силу его двойственной политико-правовой природы и многослойной содержательной структуры существуют различные мнения о природе парламентаризма. При вынесении суждений о

парламентаризме, не говоря уже о его определении, следует иметь в виду, что данное явление имеет исторический характер и на каждом этапе его развития оно имело разные проявления.

2. На развитие парламентаризма в любой стране большое влияние оказывают как особенности политического режима, характерные для данного государства, так и степень социально-исторического развития общества.

3. Соблюдение равновесия между ветвями власти является одним из основополагающих принципов парламентаризма, предполагающий, что они должны действовать независимо и зависеть друг от друга таким образом, чтобы ни одна из ветвей не доминировала над другой.

4. Одна из особенностей анализа парламентаризма состоит в том, что в настоящее время его невозможно рассматривать вне рамок проблемы демократии. Настоящий парламентаризм может существовать только в условиях демократии.

5. Для понимания тенденций развития парламентаризма на постсоветском пространстве и в странах Восточной Европы необходимо учитывать как особенности стран, входящих в их состав, таки зафиксированные в них переходные реалии.

6. Парламент в Республике Армения с точки зрения формы устоялся, за короткое время были накоплены богатые традиции и опыт, однако существует еще немалопроблем, требующих комплексногорешения.

7. Решение проблем, мешающих развитию парламентаризма в Республике Армения, возможно только совместными усилиями правительства, оппозиции и гражданского общества. Указанные стороны должны быть готовы сотрудничать друг с другом и осознавать степень своей ответственности в развитии общества.

Khosrovadukht Azatyan

Characteristics and Trends of Parliamentarism in Transforming Societies

Summary

The main aim of the research is to reveal the essence and features of the establishment of parliamentarism in transforming societies, as well as to underline its development trends. The structure of the dissertation corresponds to the purpose and main tasks of the research and consists of the introduction, three chapters, conclusion, and bibliography.

The first chapter of the dissertation **"Conceptual Foundations for the Study of Parliamentarism"** highlights the Conceptual Foundations for the Study of Parliamentarism in the context of the sequence of stages of its development and the presentation of historical forms. Reveals the essence of parliamentarism not only through studying political but also diverse set of legal definitions and interpretations.

The second chapter of the dissertation, **"Prerequisites for the Establishment of Parliamentarism in the Context of the Democratization of Transforming**

Societies" analyzes the prerequisites for the formation of parliamentary systems in Eastern Europe. Observing the aspects of the formation of parliamentarism in the post-Soviet space, the choice of the form of government was assessed as an institutional problem. It was argued that in the countries of the post-Soviet space, with the exception of the Baltic countries, the transformation process has not yet been completed. Accordingly, the institution of parliament needs to be developed; political systems have not yet been finalized. This is evidenced by the processes of consistent improvement of governance in the countries of the region, the implementation of constitutional changes, and sometimes the adoption of new constitutions.

The third chapter, **"Issues of the Development of Parliamentarism in the Third Republic of Armenia"** consists of two subsections that examine the imperatives of the development of parliamentarism in the Republic of Armenia. The logic of constitutional reforms is assessed and their influence on the formation of parliamentarism is shown. The issues of modernization of the party system in the Republic of Armenia are substantiated and trends in the development of this system in the Republic of Armenia under the conditions of the parliamentary rule are presented.

As a result of the research we came to the following conclusions:

1. Parliamentarism is a complex, multidimensional socio-political and legal-political phenomenon. Due to its dual legal-political nature and multi-layered content structure, there are different opinions about the nature of parliamentarism. When making judgments on parliamentarism or defining it one should keep in mind that it is a historical phenomenon and that it has had different manifestations at each stage of its development.
2. The development of any country is greatly influenced by the peculiarities of the political regime of the state and the socio-historical development of the society.
3. Keeping the balance between the branches of government is one of the basic principles of parliamentarism, which implies that they should act independently and depend on each other so that none dominates the other.
4. One of the features of the analysis of parliamentarism is that it is currently not possible to consider it without discussing the issue of democracy. True parliamentarianism can only exist in democratic systems.
5. In order to understand the development trends of parliamentarism in the post-Soviet space and Eastern European countries, it is necessary to take into account the characteristics of the countries that comprise it and the transitional realities that existed in them.
6. In the RA, the parliament is established from the point of view of form and institutionalization, rich traditions and experience that have been accumulated in a short period of time, but there are many issues that require a solution in terms of providing quality.
7. The solution to the issues hindering the development of parliamentarianism in RA is possible only thanks to the cooperation and efforts of the government, opposition, and civil society. The above-mentioned political parties should be ready to cooperate and realize their responsibility in the development of society.